# Արձանագրություն N 2

«ՀԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

*ք. Երևան, Արամի 1*

*«21» «12» 2016թ*
*ժ.16:20*

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Հովհաննիսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մարտիրոսյանը և Դ. Բեգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին
(Լ. Հովհաննիսյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | «էլ ՁԵՆ» ՍՊԸ | - | ք. Երևան,Խորենացի 28, հեռ.011203040 , mkrtich.khalatyan@ledlife.am, ՀՎՀՀ01849654, տնօրեն՝ Վ. Խաչատրյան |

**Որոշում թիվ 1.**
Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված է ստորև բերված աղյուսակում

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | Նախահաշվային գինը | «էլ ՁԵՆ» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|
| | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | Լուսավորման սարքեր | 1060000 | 875000 | 1050000 |

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

**Որոշում թիվ 2.**
Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ամփոփվեց «էլ ՁԵՆ» ՍՊԸ-ի հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

| Մասնակցի հայտի գնահատման չափանիշները Գնահատականը | | | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները Մասնակցի անվանումը «էլ ՁԵՆ» ՍՊԸ |
|---|---|---|---|
| 1 | Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին | Բավարար Անբավարար | Բավարար |
| 2 | Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին. | Բավարար Անբավարար | Բավարար |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | | Բավարար Անբավարար | Բավարար |

**Որոշում թիվ 3.**

Հանձնաժողովը որոշեց <<էլ ՁԵՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**Որոշում թիվ 4.**

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենիք 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և հաշվի առնելով, որ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, հանձնաժողովը որոշեց «էլ ՁԵՆ» ՍՊԸ-ի հետ առաջարկված գնի նվազեցման նպատակով վարել բանակցություններ:

Բանակցությունների համար սահմանվել է 30 րոպե ժամանակ:

Բանակցությունների արդյունքում «էլ ՁԵՆ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված գնային առաջարկը չփոփոխվեց:

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝ 1-ին տեղը զբաղեցնող ճանաչել «էլ ՁԵՆ» ՍՊԸ -ին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**Որոշում թիվ 5.**

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ կետերը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ ներկայացնել հարցում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

## 2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լ. Հովհաննիսյան)

**Որոշում թիվ 6.**

Հանձնաժողովը որոշեց «ՀԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 16:20-ին, ք. Երևան, Արամի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | | Լ. Հովհաննիսյան |
| Անդամներ՝ | | Վ. Մարտիրոսյան |
| | | Դ. Բեգյան |
| Քարտուղար՝ | | Հ. Ղազարյան |